

յարգանքով է լեցուած դէպի Անգլիան, որի ծնունդն է վիթխարի Շէյքսպիրը: Սակայն մեր էութեանը Շէյքսպիրն այնքան է հարադատացել, որ նրան համարում ենք նաեւ մերը: Եւ ճիշտ է, անշուշտ, այն միտքը, թէ Սովետական Միութեան մէջ Շէյքսպիրը դառաւ իր երկրորդ հայրենիքը:

Երկար տարիներ մեզ բաժանում են

Շէյքսպիրից, բայց դա ի՞նչ նշանակութիւն ունի, քանի որ նա մեր կեանքի մէջ է եւ մեզ հետ, իբրեւ այսօրուայ հոգեւոր մշակոյթի մի ջահ, որի արուեստը յուզել ու յուզում է ժամանակակից մարդկանց մտքերը եւ հոգեկան բարձր հրճուանքներ բերում նրանց:

ՌՈՒԲԵՆ ԶԱՐԵԱՆ
(Արուեստագետ)

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄՇԵՅԻ

ԺԼ. դարու երկրորդ կէսին երեւցած դէմք մըն է Յովհաննէս Մշեցի, որու մասին մեր ծանօթութիւնը շատ սահմանափակ է: Զանազան անգամներ գրուած է իր մասին, ու ամէն անգամ որ առիթ ըլլայ խօսելու կամ գրելու ԺԼ. դարու թոնգրակեցիներու աղանդին մասին, իբր առաջնորդ կը յիշատակուի Յովհաննէսի անունը:

Առաջին անգամ Հ. Բ. Սարգիսեանն է որ մանրամասն կերպով քննութեան կ'ենթարկէ Յովհաննէսի անձը, ճշտելու համար ԺԼ. դարու գրուած «Բանալի ճըշմարտութեան» մոլորութիւններով լի գիրքին հեղինակը¹: Հ. Բարսեղ Սարգիսեան իր ուսումնասիրութեան իբր գըլխաւոր աղբիւր ունեցած է Հ. Պօղոս Մէհէրեանի ինքնակենսագրութիւնը, ուր բաւական մանրամասն կերպով կը նկարագրուի Յովհաննէսի դէմքն ու գործունէութիւնը: Սարգիսեան մեր առջեւ յետադիմ գիծերով ներկայացնելու համար ԺԼ. դարու վիճակն ու հոգեբանութիւնը,

վերոյիշեալ կենսագրութեան կը քաղէ երկու գրուածքներ. նախ կը յիշէ Բօռճիմասուրի վանքի մէջ ապրող Յովհաննէս անունով մէկը, որ եպիսկոպոս ձեւանալով ձեռնադրած է տասնեւչորս քահանաներ, եւ երկրորդ՝ ուրիշ Յովհաննէս մը, որ նախ անցած է Վենետիկ, ուսելից «քիչ օրէն իբր դիւամուր եւ մոլորամիտ» վերջնապէս զերիստոնէութիւնը, ապա կրկին ընդունած. ձեռնադրուած է քահանայ եւ հուսկ կրկին ուրացած: Սարգիսեան հարց կը դնէ «ստուգիւ Բանալի ճշմարտութեան գրութեան հեղինակը այս քահանայ Յովհաննէսն եղած է... թէ նախալիշեալ սուտանուն եպիսկոպոսն է»²:

Հ. Բ. Սարգիսեանէ ետք՝ Վ. Գրիգորեանն է որ շօշափած է հարցը, ու նորանոր աղբիւրներով աւելի ընդարձակ տե-

1. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ., Ուսումնասիրութիւն Մանիքեան-Պաղիկեան քոնդրակեցիներու աղանդին, Վենետիկ, 1893, էջ 90-104:

2. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ., անդ, էջ 104:

ղեկութիւններ կու տայ մեզի. սակայն մեզի կը թուի որ յարգելի յօդուածագիրը՝ Հ. Բ. Սարգիսեանի գրութեան ակնարկած ատեն, կը նոյնացնէ երկու Յովհաննէսները, առանց յստակ զանազանութիւն դնելու այդ երկուքին միջեւ³:

Երրորդ հեղինակը, որ հարեւանցի ու թեթեւօրէն մօտեցած է հարցին, եղած է Տէր-Մինասեան Ե. Գ.: Այս վերջինս իբր աղբիւր ունեցած է Սարգիսեանի եւ Գրիգորեանի յօդուածները, ու անոնցմէ բանաձեւած է երրորդ մը՝ առանց դնելու հոն անձնականութիւն, այլ մանաւանդ թէ խաթարած է զանոնք՝ տալով զուտ ենթակայական մեկնութիւն մը: Տէր-Մինասեան կը գրէ. «Յովհաննէսը Մուշի շրջանից գնացել է Վենետիկ՝ Միսթարեանների մօտ, իր կրօնական համոզումները երեւի հաստատելու եւ ամրապնդելու համար: Սակայն նա շուտով համոզում է որ կաթոլիկութիւնը շատ աւելի հեռու է իր համոզումներից, քան բնիկ Հայոց աղգային եկեղեցին: Միւս կողմից էլ՝ նրա հիւրընկալների համար պարզւում է նրա հայեացքների աղանդաւորական լինելը: Դրա հետեւանքով նա իբր մոլորեալ աքսորւում է Վենետիկից եւ գալիս Կոստանդնուպոլիս, որտեղ մեծ նեղութիւններ է պատճառում կաթոլիկ հայերին»⁴:

Մեր ներկայ յօդուածին նպատակը չէ «Բանալի ճշմարտութեան» գիրքին հեղինակը ճշտել, այլ քանի մը լուսաբանութիւններ տալ՝ Յովհաննէս Մշեցիի անձին մասին, որ կը կարծուի հեղինակն ըլլալ յիշուած գիրքին:

Այս նիւթին համար իբր գլխաւոր եւ հասարակաց աղբիւր ծառայած է Հ. Պօղոս Մէհէրեանի ինքնակենսագրութիւնը, զոս Մէհէրեանի ինքնակենսագրութիւնը, որ գրած է «յամի 1811, մինչ էի ամաց 87 եւ դուցէ աւելի եւս»⁵. որով հոն պատմուած դէպքերու նկարագրութիւնը՝ յոնի օրագրութեան մը թարմութիւնը. յիշուած տարի առաջ կատարուած դէպքերու նկարագրութիւնը իր ընդհանուր գիծերու մէջ ճշգրիտ ըլլալով հանգերձ՝ կը պակսին հոն մանրամասնութիւններ: Մենք

այդ մանրամասնութիւնները պիտի քաղենք նոյն Մէհէրեանի նամակներէն, որոնք գրած է օրը օրին Պոլիսէն կամ Կարինէն, տեղեկացնելով կացութիւնը Ս. Ղազար բնակող միաբաններուն, մասնաւորապէս Ստեփանոս Մելգոնեան Արքայ-հօր:

Մէհէրեան ինքնակենսագրութեան մէջ կը յիշատակէ Բօռճիմասուրի վանքի մէջ բնակող Յովհաննէս վարդապետը, որ եպիսկոպոս ձեւանալով ձեռնադրած է տասնեւչորս քահանաներ. սակայն այնուհետեւ Մէհէրեան չի շարունակել պատմութիւնը. չենք գիտեր թէ ի՞նչ վախճան ունեցած է Յովհաննէս. Սարգիսեան պահ մը արդարացիօրէն կը տարակուսի եւ երկիւղով մը կը հաստատէ թէ մի գուցէ այս ըլլայ «Բանալի ճշմարտութեան» մէջ յիշուած Յովհաննէսը, գիրքին հեղինակը: Իրականութեան մէջ, հոս յիշուած Յովհաննէս չեպիսկոպոսը ոչ մէկ յարաբերութիւն ունի «Բանալի ճշմարտութեան» գիրքին հետ, եւ բոլորովին տարբեր անձ է քան Յովհաննէս Մշեցին, ուրացող քահանան: Հոս կ'ուզենք գրեթէ ամբողջութեամբ մէջբերել Մէհէրեանի նամակը, գրուած Կիւմիւշխանէն, 1775 թ. Յունիսին. նամակը ուղղուած է Վենետիկ՝ Ստեփանոս Մելգոնեանի. «Ի մըտանէն իմ ի Կարին... վասն վերջին հարկաւորութեան երկու գիւղացի տիրացու ետու ձեռնադրել, միոյն՝ անձամբ իմով ներկայ էի, իսկ զմիւսն յղեցի ի Վաղարշակերտ առ Յովհաննէս եպիսկոպոս, որ բնակի յԱլաշկերտ գաւառին, ի վասն Բօռճիմասուրայ, որ է առ գիւղաքաղաքան իմաւորայ: Սա գիւղացի եպիսկոպոսութեան իւրոյ ընկալեալ է ի Սիւս, ի Գաբրիէլ կաթողիկոսէ, զոր յառաջ քան զերիս ամս անդր ի Սիւս սպանին. եւ սո-

3. ԳՐԻԳՈՐԵԱՆ Վ., Բանքի Մատենադարանի, Թիւ 5, Երեւան, 1960, էջ 333-334:

4. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆ Ե. Գ., Միջնադարեան աղանդների ծագման եւ զարգացման պատմութիւնը, Երեւան, 1968, էջ 198:

5. ՄԵՀԷՐԵԱՆ Հ. ՊՕԳՈՍ, Ինքնակենսագրութիւն, Դիւան, Ս. Ղազարի, էջ 375:

կարծի), յամսեան Մայիսի (որպէս թը-
ւի): Սա եկն ի վանս մեր եւ եմուտ ի նոր-
ընծայարանն յամի Տեառն 1776, ի Մա-
յիսի 12» ու ապա ստորեւ գրած է. «Սա
վասն պակասութեան մտաց, չեղեւ ըն-
կալեալ յուրս կրօնի, այլ առաքեցաւ
յետս ի Մայիսի 28, 1777»:

Ի՞նչ բանի մէջ կը կայանայ Յովհան-
նէսի մտքի պակասութիւնը, դժուար է ը-
սել: Միւս կողմէ չենք ուզեր տարակու-
սիլ Չամչեանի արձանագրութեան ճշ-
մարտութեան վրայ. մեղի համար բաւա-
կան են յիշատակել երկու դէպքեր, քաղ-
ուած դիւանական թուղթերէ, արդարա-
ցնելու համար արձանագրութիւնը: 1793-
ին, Մէհէրեան Պոլիսէն նամակով մը կը
բացատրէ Չամչեանի՝ նոյն ժամանակ
Պոլիս պատահած կարեւոր դէպքերու նը-
կարագրութիւնը, հոն է որ կու տայ ծա-
նոթութիւն Յովհաննէսի մասին՝ որ եր-
բմն աշակերտած էր Չամչեանի. «Տա-
րոնացի Ձխաւցի պատանին Յովհաննէսն
տէրտէրի որդին, որ ի պատուհանէն ան-
տի կամէր զհայրութիւնը ի ծով արկա-
նել...»¹⁴. դէպք մը՝ ուր յստակ կը տես-
նուի պատանիին մտքին անբնականութիւ-
նը, որ կորսնցնելով իր անձին տիրապե-
տութիւնը, նման դէպքի մը կը ձեռնար-
կէ: Վանքի ձեռագիր ժամանակագրու-
թիւնն ալ՝ համառօտ գիծերով կը նկա-
րագրէ Յովհաննէսի գիմարիծն ու խառ-
նուածքը՝ հետեւեալ տողերով. «Յետս
առաքեցաւ... վասն յայտնի նշանաց խե-
լայեղութեան, որ առաւել երեւէր ի
սաստկութեան կրից ուրախութեան եւ
տրտմութեան, յուսոյ եւ յուսահատու-
թեան ի միում վայրկեանի յեղափոխելոյ,
ապա թէ ոչ այլովք մասամբք երեւէր դո-
վելի»¹⁵:

Յովհաննէս վեներելիէն բաժնուած պա-
հուն ձգած է ստացագիր մը, ուր կը հա-
տատէ վանքի վարդապետներէն փոխ ա-
ռած ըլլալը «վեց հատ վէնէտիկու եալ-
տըղ ոսկի»¹⁶, խոստանալով որ Պոլիս
հասնելուն, անոնց փոխարժէքը հատու-
ցանէ՝ հոն բնակող վարդապետներուն:
Յովհաննէս վանքէն վաճառուածի մը կեր-

պարանքը չունի, այլ հարազատի մը
դուրդուրանքը կը վայելէ: Իր մեկնած
օրն իսկ Մելիգոնեան կը գրէ Պոլիս Հ. Ա-
նանիայի ըսելով. «Այս մշեցի Յովհաննէս
պատանիս ոչ յաջողեալ կրօնաւորութեան
վասն անյարմարութեան բարուցն, առա-
քի յետս. ուստի ի հասանել նաւուս յո-
րում է սա, վճարեցես զնաւուսն հինգ
զրուշ կամ վեց... եւ զպատանիդ եթէ
կամի երթալ յերկիր իւր, ընկերակցելով
ուսեք իրը սպասաւոր կամ այլ պատշա-
ճաւոր կերպիւ ըստ իւրոյ աստիճանին,
առաքեալիք յերդրում... զի անտի երթի-
ցէ յերկիր իւր, զխաբան թուղթն նորա
եւս զնեացես ի մերոց դրամոց»¹⁷, իսկ
ուրիշ նամակի մը մէջ գեռ աւելի դուր-
դուրոտ չեշտով «եթէ ինքն կամեսցի այ-
դր ի Պոլիս առ ուսեք ի ծառայութիւն
մտանել, եւ ոչ կամեսցի դառնալ յերկիր
իւր, ինքն գիտէ, մեք զոր ինչ կարելին
էր՝ արարաք վասն Աստուծոյ, եւ աշխատ
եղաք ի վերայ նորա զայսչափ ժամա-
նակս»¹⁸:

Արդ դիւանական թուղթերէն ու ժամա-
նակակիցներու վկայութենէն քաղելով,
կը կարծենք պատասխանած ըլլալ Տէր
Մինասեանի, որ բոլորովին տարբեր կար-
ծիք կը պաշտպանէ այս մարդին մէջ:

Յովհաննէս Պոլիս հասնելով՝ չի մեկ-
նիր Կարին, այլ հոն մնալով «զպրատուն
բացեալ էր եւ զմանկունս ուսուցանէր»¹⁹.
Իսկ Հ. Զաքարիա Պոլիսէն կը վկայէ թէ
«Սա յետ դալոյն այսր՝ ամս իբր երկուս
ծառայեաց Ֆռէնկի հաղուստով ի դուռն
Պոլիսէն տէրիկ դեսպանին, եւ ապա ա-
մուսնացաւ առեալ զդուստր տէրտէրի
միոյ»²⁰:

Ծանօթ է ամէնուն որ ճիշտ այդ թը-
ւականներուն, տխուր էր կացութիւնը

14. Դիւան Ս. Ղազարի, 1793, Փետրուար 2:
15. Դիւան Ս. Ղազարի, Ժամանակագրութիւն,
հտ. Բ, էջ 630:
16. Դիւան Ս. Ղազարի, 1794, Մարտ 22:
17. Դիւան Ս. Ղազարի, 1777, Մայիս 28:
18. Դիւան Ս. Ղազարի, 1777, Յունիս 7:
19. Մէհէրեան Հ. Պ., անդ, էջ 208:
20. Դիւան Ս. Ղազարի, 1780, Մայիս 2:

հայ եկեղեցիին. եկեղեցին բաժնուած էր
երկու հոսանքի, զօրաւորը կ'իշխէր ու կը
նեղէր տկարը, նոյն իսկ մահուան կ'ա-
ռաջնորդէր. «Արդ ի սաստկանալ հալա-
ծանաց, կալան զնա (զՅովհաննէս) եւ
տարան առաջի Զաքարիայ պատրիարքին,
որ կամէր խոշտանդել զնա գանիւ եւ ար-
կանել ի բանտ թիաւարութեան»²¹, ո-
րովհետեւ Յովհաննէս նկատուած էր պա-
տրիարքին հակառակ խումբի պատկանող
անձ մը. սակայն Յովհաննէս իսկոյն կու
տայ իր դաւանութիւնը եւ Զաքարիայի
հատէ բանտէն ու թիաւարութենէն.
Բայց չի պահեր իր խոստումը, կրկին կը
շարունակէ քարոզել ու դործել պատրի-
արքին հակառակ: Հայերը թուրքերուն
օգնութեամբ երկրորդ անգամ կը ձերբա-
կալեն Յովհաննէսը եւ կ'առաջնորդեն Զա-
քարիա պատրիարքին. այս անգամ Յով-
հաննէս հրապարակաւ կ'ուրանայ քրիս-
տոնէութիւնը, Ապոստոլա՝ անունը առ-
նելով կ'արձակուի ազատ²²: Մելիգոնեա-
նի ուղղուած Հ. Զաքարիայի նամակը
չատ համառօտ կերպով կը նկարագրէ
այս ամէնը, ու այս նամակէն կ'իմանանք
Յովհաննէսի ուրացութեան բուն թուա-
կանը «ի յանցեալ աշնան ուրացեալ զհա-
ւատն եղեւ տաճիկ»²³, այսինքն 1779ի աշ-
նան: Եւ իսկոյն կը յայտարարէ թէ վե-
ներելի գտնուած ժամանակ 600 զրուշ փոխ
տուած է վանքին, ու կը յաջողի դատա-
րանի ճամբով դանձել այդ դրամը Պոլիս
բնակող վարդապետներէ²⁴. այդ առիթով
Հ. Զաքարիա արդարացի կերպով կը գրէ.
«Նա ոչ թէ ծառայեաց վանացդ, այլ ծա-
ռայութիւն ընկալաւ, եւ այսու ամենայ-
նիւ հասոյց մեղ զայնչափ վնաս»²⁵: Գա-
լաթիւրուած առաջին յաջողութենէն, Յով-
հաննէս կրկին կը գիմէ դատարան, նոյն
ճամբով ու փաստերով 2500 ոսկի եւս

առնելու համար: Սակայն խաբէութիւնը
երեւան ելլելով «իբր անիրաւ եւ կողոպ-
տիչ արկաւ ի բանտ»²⁶: Ութ ամբողջ ա-
միսներ Յովհաննէս կը մնայ բանտ, ու
ապա կը յաջողի ազատիլ արքայ Մովսէ-
սի ձեռքով, որ իր կարգին ուրացող մըն
էր²⁷:

1782ի վերջերը Յովհաննէս գեռ Պոլիս
է, կը շրջի ո'չ յայտնի, այլ ծածուկ: Կը
տարածուի լուրը թէ Յովհաննէս ձգելով
փոքր Ասիան՝ պիտի անցնի Եւրոպա.
«Որպէս լուայ - կը գրէ Հ. Զաքարիա
Մելիգոնեանի - եւ ստոյգ է, այս իբր յի-
սուն աւուրք են որ այն անուանի արքայ
Մովսէս վարդապետն, ուրացողն ի վա-
ղուց, ընդ ուրացող մշեցի Յովհաննէսին
մեր տալիսին, չուեալ են զանխաբար
աստ յիշմիր, եւ անտի ունին գալ յայ-
դոսիկ կողմանս»²⁸. սակայն ոչ մէկ վկա-
յութիւն կը գտնենք եղելութեան, մանա-
ւանդ թէ նոյն տարին Դեկտ. 25ին Մել-
գոնեան պատասխանելով Հ. Զաքարիա-
յի՝ կը գրէ. «Մինչեւ ցայժմ ոչինչ իմա-
նամք վասն արքայ Մովսէս վարդապե-
տին եւ մշեցի Յովհաննէսին, ուստի չգի-
տեմ ուր լինելն»²⁹:

Յաջորդ տարիներուն Յովհաննէսի
կեանքի մանրամասնութիւնները կը գրտ-
նենք Մէհէրեանի ինքնակենսագրութեան
մէջ, որ արդէն իսկ իր ամբողջութեամբ
հրատարակած է Սարգիսեան³⁰: Նոյն այդ
միջադէպերը, աւելի համառօտ, կուռ
ու եղական դէպքերով լի նկարագրուած
կը գտնենք Մէհէրեանի մէկ նամակին
մէջ, ուղղուած Հ. Միքայէլ Չամչեանի,
ուր կայ պատասխանը զանազան բանա-
սէրներու տարակոյսներուն. «Եւ ապա ի
բանտն եմուտ, եւ ապա չողաւ ի Կարին,
եւ անտի ի սուրբ Կարապետ, ուր արա-
րեալ էր աւագ սարկաւազութիւն, եւ ա-
պա մատնեալ զնա ի ձեռս փաշային Մշու,

26. Դիւան Ս. Ղազարի, 1781, Մարտ 15. 1781,
Ապրիլ 1:
27. Մէհէրեան Հ. Պ., անդ, էջ 209:
28. Դիւան Ս. Ղազարի, 1782, Նոյեմբեր 23:
29. Դիւան Ս. Ղազարի, 1782, Դեկտեմբեր 25:
30. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ., անդ էջ 103-104:

եւ փառայն յանձնէ զնա մոլայի միոյ ընթերցողի, առ ի կրթել զնա յաղանդ իւրեանց. իսկ ուրացեալն հմուտ աղանդոյ նոցա, ինքն կրթիչ լինի մօլային: Յետ այսորիկ զնայ անտի ի խնուս առ փառան խնուսայ եւ ասէ ցնա թէ ես տաճկացայ եւ այժմ կամիմ հայ լինել, տալ քեզ խարաճ եւ բազում շինութիւն առնել զաւառի քում: Իսկ փառայն թոյլ տայ նմա հայանալ եւ ամուսնանալ, եւ բռնութեամբ փառային ձեռնադրել քահանայ ի յառաջնորդէ սուրբ Կարապետու. եւ սկըսանի նոր օրէնս քարոզել, եւ այլի քահանայից տայ ամուսնանալ վերստին, աշխարհականաց հրաման տայ առնուել երկուս եւ կամ երիւ կանայս, եւ երրորդ՝ զամենայն պահս բառնայ բաց ի քառասնորդաց պահոց, ասելով թէ այս միայն զտանի յաւատարանի: Չայս ամենայն լուեալ Ղուկաս կաթողիկոսին, հնարիւք ինչ ըմբռնեալ է զնա եւ տարեալ է յէջմիածին (ոմանք ասեն առ ի սպանանել), եւ անտի փախուցեալ վերստին եկեալ է ի խնուս եւ այժմ նստի ի Տուման գեղջն եւ առնէ տէրտէրութիւն: Պատմեն թէ երկուս եւ կամ երեք գիւղք յաղանդս իւր զարձուցեալ է»³¹:

Նամակին թուականն է 1793, հոս կը վերջանայ մեր ծանօթութիւնը Յովհաննէսի մասին: Գրիգորեանի յօդուածին մէջ յիշատակուած աղբիւրներուն համաձայն, Յովհաննէս արդէն իսկ սպանուած է մինչեւ 1793 Հոկտեմբեր թուականը, մինչ Մէհէրեանի ինքնակենսագրութեան համաձայն, դեռ մինչեւ 1801 թուականը Յովհաննէս կենդանի է: Անկարելի է որ Մէհէրեանի յիշատակած թուականը գրիչի սխալ մը ըլլայ, որովհետեւ այն բոլոր մանրամասնութիւնները որ կը գրէ ինքնակենսագրութեան մէջ Յովհաննէսի մասին, իր 1793 Փետր. 2ին գրած նամակին մէջ արդէն իսկ պատմած է ու ոչ մէկ նորութիւն կ'աւելցնէ 1793-1801 տարիներուն մէջ պատահած գէպերուն մասին:

31. Դիւան Ս. Ղազարի, 1793, Փետրուար 2:

Բացի ասկէ, Մէհէրեան 1793-1801 տարիներուն միշտ գտնուած է Պոլիս ու Կարինի շրջանակներուն մէջ, ու զարմանալի կերպով ոչ մէկ նորութիւն կը գրէ Յովհաննէսի մասին. նմանապէս կարելի չեղաւ գտնել որեւէ նորութիւն ու մանրամասնութիւն Ս. Ղազարի գիւսանին մէջ՝ այդ շրջանի նամակներէն, որոնք գրուած են ժամանակակիցներէ՝ Պոլիսէն, Կարինէն ու խնուսի շրջանակներէն:

Յովհաննէս մշտնի կեանքին վերաբերեալ այս բոլոր մանրամասնութիւնները տալէ ետք, որ գլխաւոր նպատակն էր մեր ներկայ յօդուածին, իբրեւ զարակացութիւն կ'ուզենք ըսել հետեւեալը. թէ եւ բանասէրներէ կը կարծուի թէ այս Յովհաննէս մշտնի ըլլայ հեղինակը «Բանալի ճշմարտութեան» գիրքին, սակայն մենք անկարելի կը գտնենք այս ենթադրութիւնը, եւ առանց վարանելու կ'ուզենք հաստատել թէ տարբեր Յովհաննէս մը պէտք է ըլլայ այդ գիրքին հեղինակը, հետեւեալ պատճառներուն համար:

«Բանալի ճշմարտութեան» բնագիրին գրչութեան թուականը, ինչպէս որոշ գիտենք, 1782 է, երբ դեռ Յովհաննէս մշտնի կը գտնուէր Պոլիս, ու չէր սկսած իր աղանդը քարոզել ու տարածել: Թողունք որ յիշուած աղբիւրներէն կը տեսնուի թէ Յովհաննէս անկարող լինէր անձ մը եղած է, որով դժուար է որ նման անձ մը կարենայ պատրաստել ու գրել մեղոտիկ վարդապետութիւն մը ու զայն քարոզել:

«Բանալի ճշմարտութեան» գիրքին մէջ իբրեւ հեղինակ նշանակուած է «Ամենապայծառ Յոհաննէս Վահագունի», նոր մակդիր մը որ ամենեւին չենք գտներ Յովհաննէս Մշտնի համար: Ու դեռ իբրեւ վերջին ապացոյց մը կրնայ ծառայել Ս. Ղազարի գիւսանին ու Մէհէրեանի բացարձակ լռութիւնը՝ նկատմամբ «Բանալի ճշմարտութեան» գիրքին, որ ամենեւին չ'ընծայեր զայն իրեն ծանօթ Յովհաննէս մշտնիին:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

ՄԵՂՔԻ ԵՒ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Գ. ՆԱՐԵԿԱՅԻԻ ՔՈՎ

Նարեկը՝ հին միայնակեցական հոգեւորականութեան ամէնէն աւելի արժէքաւոր վաւերացութեան մին կը համարուի: Սուրբ եւ ցաւի հոգեւորականութիւնն է, թէ եւ ոչ տարամբեօրէն: Արեւելեան հոգեւորականութիւնը ճոխ է մատենաներով, աղօթքներով եւ շարժականներով, որոնք բոլորն ալ միեւնոյն նիւթը կը շօշափեն. անձին մեղքերուն ամբաստանումը: Արեւմուտքի մէջ հետաքրքրական պիտի ըլլար Ս. Անսելմոսի մտածականներէն քանի մը հատ կրկին կարգաւ. Գրիգոր Նարեկացիի աղօթքներուն նոյն շէտը եւ նոյն ողբերգականութիւնը կը կրեն, թէ եւ Ս. Անսելմոսով զարգացական (սկոլաստիկ) աստուածաբանութիւնը կը սկսի: Հոգեբանական տեսակէտով՝ Անսելմոս նոր մարդ մը կը յայտնուի. մարդ մը՝ որուն հեղութիւնը եւ անձը դուրս կը ցայտեցնեն զինք՝ իր եւ զինքը կանխող ժամանակներու մարդոց շարքերէն:

Գրիգոր Նարեկացին, ընդհակառակը, Գրիգոր Նարեկացուցիչն է ցաւի հոգեւորականութեան՝ որ զընդմէջէն եւ արցունք: Նարեկին հիմնական նիւթը՝ իսկապէս մեղքի ամբաստանումն է. մարդս ինքնազգիքը Աստուծոյ առջեւ կը գնէ. Աստուծոյ առջեւն է՝ ընդունելու համար Անոր դատաստանը. ուղղակի դատապարտութեան դատաստան մը չէ, այլ գլխաւորապէս դատաստան մը՝ որ մարդուս կուտայ մեղքի գիտակցութիւնը, իր անձին խեղճութեան խոր համոզումը եւ անգարմանի կործանումի մը ըմբռնումը: Մարդկային խեղճութեան տեսութիւնն է սակաւ, որ ամէն երգի մէջ կը կրկնուի. սպաւորիչ է. անսահման եւ անյատակ

խեղճութիւն մըն է. ներկայ են բոլոր մեղքերը, եւ բոլորը կը ներկայացունեն՝ իրենց նենդութեան մէջ մատնանշուած, իրենց կործանարար փորձառութեան ապրումով:

Մեղքի տեսութեան շարունակական կրկնումը կը գեղեցկացնէ՝ բայց նաեւ կը ծանրացնէ այս քերթուածը. ամբաստանութեան եւ լացի անգագար եւ անվերջանալի կրկնումը՝ կրնայ ձանձրացնել, կրնայ յոգնեցնել, բայց ասիկա ալ Նարեկին կուտայ իր յատուկ շէտը, ներշնչումի միութիւնը եւ իր վեհութիւնը:

Գ. Նարեկացին շարունակաբար կարգաւ դժուար է. այնպիսի մեծութիւն մը ունի՝ որ ուրիշ բանաստեղծներու մէջ դուրս չ'ուրիշ չ'ունի. գոնէ ես չեմ ճանչնար:

Գ. Նարեկացիին մէջ մարդը միշտ մեղաւորն է. Աստուծոյ առջեւ մարդս իր մեղքերուն գիտակցութիւնը կ'ունենայ, իր փրկութեան բացարձակ անկարողութիւնը կը զգայ, իր դատապարտութեան մտածումովը կ'ապրի: Առանց Աստուծոյ՝ մարդս խեղճութիւն է միայն, աղտեղութիւն է, զգո՞ւմի, բոլոր մեղքերու պատասխանատուն: Նարեկացին ոչ մէկ մեղք իրեն օտար կը համարի: Ինչպէս կրնայ դոյնալ, ուրեմն, հանդիպումը մարդուն եւ Աստուծոյ միջեւ: Ինչ որ Գրիգորի Նարեկը կը բնորոշէ՝ Աստուծոյ եւ մարդու հանդիպումն է Քրիստոսի մէջ: Հետաքրքրական է մատնանշելը՝ թէ Նարեկին Աստուծոյ, որուն Գրիգոր կը գիմէ, գրեթէ միշտ Քրիստոսն է: Աստուած է, բայց Աստուած մը որ մարդուս կը ներէ. ամենասուրբ Աստուածն է, բայց մօտեցած է մարդուն, աշխարհ եւ կամ, մարդս քաշեր է իրեն, իր վրայ ու-